ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԵՐ

ՀՀ ԳԱԱ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ

Հարգարժա՛ն գործընկերներ, այսօր հավաքվել ենք գիտաժողովի մի չափազանց կարևոր թեմայով: Այս տարի լրանում է ԻԻՀ և ՀՀ-ի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման երեսուն տարին: Իհարկե, մենք մինչև Քրիստոսի ծնունդը և դրանից հետո, որպես այս տարածաշրջանի հնագույն ժողովուրդներ՝ հայերը և իրանցիները, և հնագույն պետություններ ունեցել ենք միջպետական հարաբերություններ: Հետո, պատմական հանգամանքների բերումով ապրել ենք միասին, և ահա՛, դիվանագիտական հարաբերությունների հաստատման այս իրադարձությունը մի նոր փուլ է մեր երկու ժողովուրդների հարաբերությունների մեջ: Սակայն, այն իր նշանակությամբ չափազանց կարևոր է, նախ այն առումով, որ մենք բարեկամ ժողովուրդներ ենք: Երկրորդ, 90-ականներին էական էր ԻԻՀ աջակցությունը մեր երկրին, և երրորդ, այսօր աշխարհաքաղաքական բարդ իրադրության պայմաններում, մեր հարաբերությունը մեր հնագույն հարևանի հետ ամուր կառուցելը հնարավորություն կտա դիմակայել սպասվող և տեղի ունեցող մարտահրավերներին: Այսօր Իրանի տարածքում գործում է հայկական համայնք, ապրում են հայեր: Նրանք ունեն կրթական-մշակութային զարգացման բոլոր հնարավորությունները, պահպանվում են հայկական հուշարձանները և այս առումով, իբրև պետություն, մեծ հարգանքով է

վարվում իր հայ քաղաքացիների նկատմամբ: Դրա ապացույցն է այն, որ ունենք երկու հայ պատգամավոր Մեջլիսում և մի ուշագրավ փաստ. ըստ ավանդույթի, 13-րդ դարում Արաքսի երկու ափերին, դեմ առ դեմ, երկու հովիվ եղբայրներ կառուցել են մատուռներ: Այդ մատուռներից մեկը Ատրպատականում է, կանգուն է, ավելին, պետության աջակցությամբ վերականգնվել է և 2008 թ.-ից ներառված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության հուշարձանների ցանկում: Մյուս մատուռը՝ որը գտնվում է Բոլշևիկների կողմից Ադրբեջանին նվիրած Նախիջևանի տարածքում, այսօր չկա և ավերվել է: Տեսե՛ք, մի փաստ, թե ինչպե՞ս է վերաբերվում մի հարևան մեզ հետ, և ինչպե՞ս է մեզ հետ վերաբերվում մյուսը: Սա սկզբունքային փաստ է, որը պետք է հաշվի առնել: Գիտաժողովի թեմաների ցանկում կան թեմաներ, որոնք վերաբերում են մեր պատմական և մշակութային անցյալին, և աշխարհաքաղաքական սպասվող իրադարձություններին և մեր հարաբերությունների հեռանկարներին: Ողջունելով գիտաժողովը այն հայտարարում եմ բացված: